№ 169 ՇԱԲԱԹ 3 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 3 ՕԳՈՍՏՈՍԻ № 169

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին հարիւրները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՇԵՏԵՒԱԲ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պատիւ՝ -20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Ցոկիսից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Металь и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38 Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յուլիսի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այրի Փեփրոնիա Տէր-Պետրոսեան Զարդեղեանցը խորին վշտով յայտնում է ազգականներին, բարեկամներին, պաշտօնակիցներին և ծանօթներին իր թանգագին ամուսին-ընկեր

ՆԱԴԵԺԴԻՆ-ՍՕՎԵՏՆԻԿ

Մեարովը Տէր-Գրիգորեան ԶԱՐԴԵՂԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 1-ին, երկարատեւ ծանր հիւանդութիւնից յետոյ, 78-ամեայ հասակում: Ամփոփը ամէն օր, երեկոյեան ժամը 7-ին (Անչխասակայա փող. № 13): Թաղման մասին կը յայտարարվի առանձին:

ՀՕՕ.

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԵՕԹՆԵԱԿ

Այսօրվանից սկսվում է Ղարաբաղի եօթնեակը, որովհետեւ այսօրվանից սկսվում է Ղարաբաղի թեմական դպրոցի 75-ամեայ գոյութեան յօբելեանի նախատօնակը՝ ուխտաւորութեամբ դէպի Գանձասարի հռչակաւոր վանքը, ուր ամփոփված են դպրոցի հիմնադիր Բաղդասար միտրօպոլիտ Հասան-জալալեանի աճիւնները:

Պատիւ է բերում թէ յօբելեանական զարգարդիր յանձնաժողովը, որ չէն բաբաղի խնտելիգենցիային, որ չէն մոռացել յարգել այդ նշանաւոր եկեղեցականի և ազգային գործչի յիշատակը, այցելելով նրա դամբարանը այն տօնախմբութեան նախօրեակին, որ պէտք է կատարվի նրա յաւերժական գործի փառաբանութեան համար:

Գանձասարը մեր հռչակաւոր վանքերից մինն է՝ թէ իբրև պատմական և թէ իբրև ճարտարապետական նշանակութիւն ունեցող: Չը խօսելով աւելի հեռաւոր ժամանակների մասին՝ յիշենք, որ 17-րդ և 18-րդ դարերում, նա, իբրև Աղուանից կաթողիկոսների աթոռանիստ, առանձին դեր էր խաղում հայ ժողովրդի կեանքի մէջ. յիշենք, որ այդտեղ էին երկնվում, ծաղրվում Հայաստանի ազատութեան և անկախութեան տենչանքները Եսայի, Ներսէս կաթողիկոսների, Իսրայէլ Օրբի և մելիքների միահամուռ խորհրդակցութեամբ: Յիշենք, վերջապէս, որ նա մայր աթոռն էր Հասան-জալալեան իշխանական ցեղի, որ ոչ նուազ դեր է խաղացել հայոց պատմութեան մէջ և որի շառաւիղներից մինն էր Բաղդասար արքեպիսկոպոսը, որ սաացաւ ռուսաց կառավարութիւնից «միտրօպոլիտ» տիտղոսը, իբրև մի տեսակ փոխարինութիւն Աղուանից կաթողիկոսական կոչման, որին նա թեկնածու էր, և որը, սակայն, քաղաքական և այլ պատճառներով, վերացվեց:

Սակայն Բաղդասար միտրօպոլիտի արժանիքը և Ղարաբաղին մատուցած ծառայութիւնները նրա մէջ չէն կայանում, որ նա Հասան-জալալեան տոհմի ներկայացուցիչն է, կամ Աղուանից կաթողիկոսների վերջին շառաւիղը: Ոչ. նա այսօր պէտք է օրհնաբանվի և փառաւորվի՝ իբրև հիմնադիր և նախաձեռնող այն կրթարանի, որ ամբողջ 75 տարի Ղարաբաղի հայութեանն ուսման և լոյսի կաթը:

Ճիշդ է, Բաղդասար միտրօպոլիտը ուսումնական և կրթեալ անձն չէր և շատ հանգամանքներում նրա տգիտութիւնը նոյն իսկ առասպելական է եղել: Բայց նա վերին աստիճանի ժողովրդասէր և ուսումնասէր անձն էր: Այդ տգէտ համարված եկեղեցականը քաջ ըմբռնել էր դեռ այն ժամանակ, երբ խաւարը համատարած էր, ուսման և կրթութեան նշանակութիւնը մատաղ սերնդի համար և իբրև քաջ հովիւ հոգս տարաւ, որ իր հովութեան յանձնված լայնածաւալ թեմի մատաղ [illegible] ման օջախ, որից կազմվեց ապագայում ներկայ թեմական դպրոցը:

Բայց Բաղդասար միտրօպոլիտը և հեռատես, գործնական մարդ էր: Նա հասկացել էր, որ դպրոցը պէտք է ապահովել: Եւ ահա նա կատարեց մի հսկայական գործ. նա հետամուտ եղաւ նորից ձեռք բերել հայոց վանքերի, գլխաւորապէս Գանձասարի, Խոթի և այլ վանքերի ունեցած նախկին ահագին կալուածները: Երբ մեռաւ, նա թողեց իբրև ազգային-եկեղեցական սեփականութիւն մօտ 150,000 դեսեատին կալուածներ՝ անտառներ, հողեր, գրեթէ մի ամբողջ իշխանութիւն: Նրա մեղը չէ, եթէ նրա յաջորդները, Ղարաբաղի առաջնորդները և հայոց հոգևոր իշխանութիւնը չը կարողանան պահպանել ու խնամել այդ ահագին կալուածները և շահագործել յօգուտ ազգի: Հանգուցեալ Մատթէոս I կաթողիկոսը այդ կալուածները յատկացրեց թեմական դպրոցին: Եւ եթէ նրանք լաւ շահագործվէին, խնամվէին, Ղարաբաղի թեմական դպրոցը կը լինէր ամենահարուստը մեր բոլոր թեմական դպրոցների մէջ և նոյնիսկ իր միջոցներով կը պահպանէր թեմի ճեացեալ բոլոր ծխական դպրոցները:

Մեծ է այդ կողմից Բաղդասար միտրօպոլիտի արժանիքը և անգնահատելի են նրա մատուցած ծառայութիւնները ազգային դպրոցին:

Ուստի այսօր, երբ կատարվում է նրա տոհմական վանքում, Գանձասարի վանքում, նրա հիմնած դպրոցի գոյութեան 75-ամեակի նախատօնակը, մենք և մեզ հետ Ղարաբաղի ամբողջ ժողովուրդը յարգանքով և պատկառանքով գլուխ ենք խոնարհեցնում այդ ժողովրդասէր եկեղեցականի շիրմի առաջ:

Յարգանք և պատիւ Բաղդասար միտրօպոլիտի յիշատակին:

Հ. Առաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, 20 յուլիսի

Հայոց-Զորի Անգղ գիւղի մերձակայքում քիւրդերի ու երկու հայ երիտասարդների միջև ծագում է մի ընդհարում: Քիւրդերը կեռաս էին բերել ծախելու, իսկ հայերը և Արտամետ գիւղերում, նոյն տեղերից էլ քաղաք, և ահա յաջորդ օրը ժանդարմները քիւրդ խուժանի հետ ընկերակցութեամբ խուժում են գիւղում և սկսում են խուզարկութիւններ ու անկարգութիւններ անել ու վերաբերմունք հայերի հետ 17 գիւղացիների առաջնորդում են բանտը. իսկ քիւրդերին թոյլատրում են վերադառնալ իրանց գիւղը: Սա էլ անշուշտ թիւրք արդարադատութեան օրինակներից մէկն է. կռուողներից մէկ կողմին պարգևատրել, իսկ միւսին դատապարտել, որովհետեւ մէկը քիւրդ, իսկ միւսը հայ է: Խուզարկութեան ժամանակ գաւառի միւդիրը, որ Ռամէլիի պաշտօնեաներից է, բղաւում է այս տեսակ պրովոկատորական խօսքերով. «Հայեր, մենք իմանում ենք, որ դուք այսօրինակ դէպքեր ուզում էք սարքել ռուսական միջամտութիւն հրաւիրելու համար»: Չենք իմանում, թէ այսչափ հայերի բանտարկութեան կամ գիւղի խուզարկութեան նպատակն ի՞նչ է, երբ դէպքը պատահել է գիւղից հեռու և միայն երկու հայերի հետ, որոնք արդէն վիրաւորվել են, մէկը բաւական ծանր կերպով:

Շահբաղի գիւղի վերն Նուրի անունով մի ժանդարմ մի անյայտ անձից վիրաւորվում [illegible] գնալիս. վիրաւորը յայտնում է, որ իրան վիրաւորել է մի հայ պատանի և փախել. այդ պատճառով մօտակայ արտերում հունձք քաղելու համար աշխատող մշակներին հարցաքննութեան ենթարկեցին, բայց կարելի չեղաւ մի հետք գտնել: Այս ու վերջերս պատահած մի քանի դէպքեր զայրոյթ և յուզում են առաջացրել թիւրքերի շրջանակներում, ուստի վալի Թահսին-բէյ կանչելով հայոց առաջնորդին յայտնեց, որ հայերի կողմից այս տեսակ դէպքերի կրկնութիւնը մոլեռանդ թիւրքերի շրջանակներում տարաձայնութիւնների տեղիք է տալու և կարող է վատ հետեւանքներ առաջացնել. ուստի խնդրում է խրատներ կարդալ [illegible] բի տեղիք չը տալու համար:

Ամսիս 12-ին, քաղաքից կէս ժամի չափ հեռաւորութեան վրա, Աւանց գիւղի ճանապարհին, թիւրքացած մի հայ փորձում է բռնաբարել մի հայ կնոջ, որի հիշերի վրա հանում են հայ զինուորներ և աղաղակում են թշուառ կնոջը. ոճրագործը բռնարկվել, բայց յետոյ արձակվել է այն տրամաբանութեամբ, որ բռնաբարութեան փորձը չէ աջողվել:

Ամսիս 13-ին Միւլք գիւղացի մի քիւրդ յարձակվում է արտում աշխատող մի հայի վրա, կարծելով որ նա իր հայրը սպանող պլեմնցի Տիգրանն է. հրացանը ուղղում է դէպի նա, բայց հարուածը վրիպում է. հայն էլ է դիմադրում և հաղթում քիւրդին: Քիւրդերը հայերի օգնութեամբ, որին և հեռացնում են իրանց գիւղից: Քիւրդերը համարելով այս դէպքը որպէս հայերի կողմից յարձակումն քիւրդերի վրա՝ իմաց են տալիս գաւառի միւդիրին, որ գալիս ու կրկին պրովոկացիայի է դիմում. «Հայեր, դուք ուզում էք այս երկիրը ռուսներին գրաւել տալ. բայց գիտցէք, որ այդ պիտի լինի առանց այստեղ մի հայ մնացած լինելու»: Ցիշեալ տեսարանչակ միւդիրը 20-ից աւելի գիւղացիների կալանաւորում և Վան է ուղարկում. բայց վալի Թահսին-բէյ նրանց քննութեան ենթարկելուց յետոյ՝ բոլորին էլ ազատ է արձակում:

Խիզան գաւառի Նորշէն գիւղում սպանվել է մի հայ [illegible] գիւղերի ձեռքով, այսօր էլ Բերկրի գաւառից մի հեռագիր յայտնում է, թէ սպանվել է Խօլոն գիւղացի մի հայ ճանապարհորդ:

Ամսիս 12-ին վրանաբնակ քիւրդերը ուզեցել են քշել Կարկառ գաւառի Թօղու գիւղի հայերի ոչխարները. հովիւին ծեծում են. գիւղացիք իմանալով օգնութեան են գիմում և յարձակումը վանելով՝ վիրաւորում են երեք քիւրդերի, իսկ քիւրդերն էլ սպանում են իրանց մօտ գտնվող մի հայի: Կառավարութիւնը հայերին համարելով պատասխանատու՝ ձերբակալում և Խիզան գաւառի կենտրոնն է ուղարկում 7—8 ծերունի հայերի, իսկ երիտասարդները փախչում են, որով գիւղը այժմ այր [illegible] աշխատաթիւները ծառայութեան չեն [illegible] նշանակում արդեօք կառավարութեան կողմից օժանդակութիւն ուազակներին:

Մարակ

Վիէննա.—Սերբայեվոյից հաղորդում են, որ Լեռնային Տուզլայում և Բուքինայում խօլերայից հիւանդացած վեց հիւանդները մեռան: Երկու տեղերն էլ զօրաշղթայով առանձնացված են: Եալու, Սպրէչա և Բօսնա գետերը յայտարարված են վարակված:

ՄԵՐԶԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԵՊՔԵՐԸ

(ԼՐԱՐԵՐԻ ՄԷ ՑՈՒՑԱՏՈՒՐԸ)

—o—

Կ. Պոլիս, 25 յուլիս

Օրերէ ի վեր տիրող սպասողական ու տարտամ վիճակը այսօր իր վախճանին հասաւ:

Բալկանեան եղբայրասպան պատերազմի վերջակէտը հավիւ կը դրուէր Բուքրէշի մէջ, ահա կը բացուի նոր վարագոյր մը, նոր տեսիլ մը, ուր չենք գիտեր թէ ո՞րոնք պիտի ըլլան դերակատարները:

Այսօր կէսօրէն քիչ առաջ մեծ պետութեանց դեսպանները անջատաբար ու առանձին առանձին ներկայացուցին բերանացի զեկուցում մը, որուն հետեւեալ բնագիրը շատ պերճախօս է, ապացուցանելու համար թէ Թիւրքիա որքան մեծ ու նոր տագնապի մը մուտքին վրայ կը գտնուի:

[illegible] կրկնեցին վեց մեծ պետութեանց ներկայացուցիչները Սայիդ Հալիմ-փաշայի՝ անոր Եէնի-գիւղի ապարանքին մէջ:

«Պատկանած պետութիւնէս ստացած հրամանս համաձայն, պաշտօն ունիմ վճռական կերպով հրաւիրել օսմանեան կառավարութիւնը, որ յարգէ Լօնդոնի դաշնագրով որոշուած սկզբունքները, մասնաւորապէս Միդիա-Էնոս գիծին պահպանման ու տեւականացման մասին եղած պայմանները:

«Միևնոյն ժամանակ արտօնուած եմ ձեր բարձրապատուութեան յայտարարելու, թէ պետութիւնները որամադիր են նկատի առնելու բոլոր այն պայմանները, զորս կայսերական կառավարութիւնը իր սահմանապրտի [illegible]

Սայիդ Հալիմ-փաշա, բնական է թէ, ոչէ պատասխան չէ տուած, սակայն խոստացած է պատասխանել խորհրդակցելէ յետոյ իր պաշտօնակիցներուն հետ:

Այս նպատակով կէսօրէն յետոյ գումարուեցաւ մինիստրներու խորհուրդը, որ աւելորդ է ըսել թէ ուրիշ որոշում չի կրնար տալ, եթէ ոչ մերժել Եւրոպայի պահանջը:

Եւ չենք գիտեր թէ այս պարագային հետեւանքը ինչ պիտի ըլլայ: Սակայն այս մերժումը անխուսափելի է և շատ որոշ: Եթէ դահլիճը ոեչ գիշում ընէ, արդէն ներքին խռովութիւնն անխուսափելի պիտի դառնայ:

Միւս կողմէ՝ պէտք է նկատել, թէ դահլիճին այն յայտարարութիւնը, թէ այն պարագային, որ կառավարութիւնը բանակը եթէ քաշել ուզէ, անիկա չպիտի հնազանդի, կեղծ չէ և ոչ ալ հնարք մը Եւրոպան խաբելու: Ընդհակառակը իրական է, և այսօր բանակը ըմբոստ ու ապստամբ է կառավարութեան դէմ: Ինվէր-բէյ, բանակին գլուխը անցած, երբէք որամադիր չէ հնազանդելու կառավարութեան որոշումներուն: Եւ կառավարութիւնը իր պրեստիժի տեսակէտով բնական է թէ չի կրնար, ստոյգ գիտնալէ յետոյ՝ թէ բանակը չպիտի հնազանդի իր հրամանին, հրամանդ տալ տեղի տալու և էդիրնէէն քաշուելու:

Օսմ. բանակը հիմա պետութեան ճակատագիրը իր ձեռքերուն մէջ ունի, և քաղաքականութիւնը, որ ուզիղ բանակարութեան ճամբան կրնար ցոյց տալ, այլևս ձայն չունի երկրի մէջ:

Զինուորն է, որ պիտի վճռէ թէ Թիւրքիա կրնա՞յ կամ պէտք է ապրի, թէ՞ ոչ՝ պէտք է մեռնի:

Հիմա կառավարութիւն և ժողովուրդ բանակին կամ, աւելի ճիշդ, Ինվէրին և անոր քանի մը արբանեակներուն կը հետեւին:

Ինվէր-բէյ՝ Նազըմ-փաշան սպաննելէ յետոյ իր այդ ոճիրը արդարացնելու համար նպատաւոր առիթի մը կը կարօտէր, և այդ գեղեցիկ վայրկեանն ու մէկ հատիկ ռումբը գտած ըլլալ կարծեց բանակին գլուխը անցած՝ Թրակիոյ բաց դաշտերուն մէջ՝ արշաւելով:

Հիմա ձախորդ ու ուռուցիկ բառերով զինուորականի պոռոտախօսութիւններով կը խանդավառէ բանակը և ժողովուրդը, հանդիպող թղթակցին յայտարարելով թէ «էդիրնէ ոչ թէ կը թողուի, այլ կը գրաւուի»:

Թիւրքական ճամարտակութեան բազմաթիւ այն օրինակներէն յետոյ, որոնց ականատես եղանք 1908-էն ասդին, այս ճամարտակները ամենայն ինչ կրնան ընել, բայց ոչ թէ Եւրոպան խաբել, այլ ինքզինքնին խաբել:

Ինչպէս որ Նազըմ-փաշան սպաննելէ յետոյ՝ Ինվէր-բէյ, Թալեաթ-բէյ, Ենվէր-բէյ, Ալի-Ռիզա-բէյ, Ֆէթհի-բէյ, Ռաուֆ-բէյ, Ալի-Ֆուատ-բէյ, Ալի-Հայդար-բէյ, Ալի-Ֆէթհի

տակութիւնը մեզի համար նշանակութիւն մը չունի, քանի որ մենք Բոսնա-Հերսէքի, Կրետէի և Մակեդոնիոյ համար ալ այս տեսակ պոռոտախօսութիւններու ունկնդրեցինք, սակայն յետոյ տեսանք, թէ ինչպէս այդ մեծ-խօսիկութիւնները լուն համակերպութեան վերածուեցան։

Նոյն այդ համակերպութիւնը հաւանական է որ ցոյց տան Էդիրնէի խնդրոյն մէջ, եթէ սակայն Եւրոպա զիանայ ազդել Թիւրքիոյ վրայ։

Եւ խնդիրը ատոր վրայ է արդէն։ Համաշխարհութիւնը մինչև զէնքի դիմելուն մէջ պիտի կրնա՞յ իր գոյութիւնը պահել։ Եթէ կարելի ըլլայ ասիկա, միջազգային նաւախումբի մը օսմանեան ջուրերը մտնելն իսկ բաւական է Էդիրնէն անխօս կերպով դարձնելու համար Բուլգարիոյ։ Հայորդի

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
1 օգոստոսի

Պետերբուրգ.—Համառուսական տէրօպլուրը հեռագիր է ստացել, որ օդաթռիչ Ժան Նուարը ցած է իջել Բերեզովի մօտիկ, Պսկովի նահանգում։ Իջնելիս ապպարատը վնասվել է։

—

Կիէվ.—Բացվեց երկրորդ համառուսական կօպերատիվ համագումարը։ Եկել են մօտ 1500 պատուիրակներ, ի թիւս որոց նաև Կովկասից։ Ներկայացված են կօպերացիայի բոլոր տեսակները։ Ներկայ են մայրաքաղաքի ու ծայրերկիրներից եկած լրագիրների ներկայացուցիչներ։ Համագումարը բաղկացած է հինգ սեկցիաներից՝ վարկային, գիւղատնտեսական, արհեստաշխատանքի, սպառողական և կօպերացիայի վերաբերեալ օրինագծեր մշակելու։ Նախագահող կոմս Հէյդէնը, ողջունելով համագումարը, դիմեց խնդրելով ազգային և քաղաքական հարցեր չը շոշափել։ Համագումարին մասնակցում են մի քանի գայիցական և գերմանական կօպերատիվ ընկերութիւններ։

—

Պետերբուրգ.—Կայսերական մարդասիրական ընկերութեան տակը Տարասովեան սրբափորացում նակայական հրդեհ է։ Այրվել է 5 միլիոն պուդ հին թուղթ, որ նուիրված էր յօգուտ ընկերութեան։

—

Տօկիո.—Պրոֆ. Արիգան գնաց Պէկին չինական սահմանադրութեան նախագծի մշակումը շարունակելու համար։ Դիացի գնալը Եապօնիա յետաձգված է եապօնական կառավարութեան պահանջով, Ամերիկային անբաւականութիւն չը պատճառելու համար։

ԳՈՐԾԱԳՈՒԼ

—

1 օգոստոսի

Լօնտ.—Վերսկսվեց էլեքտրաքարշի կանոնաւոր երթեւեկութիւնը։ Զինուորական և ոստիկանական հսկողութիւնը վերացված է։ Մերժել են գոհացում տալ ծառայողների պահանջներին։

—

Ռիգա.—Ֆէնիքս գործարանում աշխատանքները վերսկսվում են օգոստոսի 2-ից հին պայմաններով, համաձայն բանւորների հետ կայացրած համաձայնութեան։ Գործարանի վարչութիւնը պարտաւորութիւն է յանձն առել վերաքննելու և աւելացնելու նրանց հնարաւորութեան չափ։

—

Ռիգա.—Գործադուլ արին նաւահանգստում աշխատող մօտ 2800 բանւորներ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՆՐԱ ԿԵՆՏՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՈՒՄ

(Ա. Լէօնեվսկիի)

—

Կարելի է արդէօք խօսել նորածին Երեւանի դաստիարակութեան մասին. անկասկած՝ այո։ Արտաքին աշխարհից իրան պաշտպանող մօր մարմինը թողնելով, Երեւան ենթարկվում է ամէն տեսակ ֆիզիքական ու հոգեկան ազդեցութիւններու։ Եթէ մենք մտածելու լինենք, թէ որքան թոյլ և անօգնական է լինում նորածինը, որքան քնքոյշ և որքան դեռ անկազմակերպ է նրա ուղեղը, այն ժամանակ մեզ պարզ է լինում, որ այդ միջոցում արտաքին միջավայրը պարտադիր է նրա համար բոլորովին բացառիկ դեր խաղալ։ Մինդեան առաջին օրերից իսկ շրջապատող պայմանները անընդհատ ազդում են Երեւանի հոգու վրա, որոշելով նրա ընաւորութեան զարգացումը, նրա ապագայ անձնաւորութեան հիմքը դնելով։ Մենք հնարաւորութիւն չունենք, ի հարկէ, ամէն մի առանձին գործօնի ազդեցութիւնը պարզել։ Երեւանի ընաւորութեան կազմակերպութեան ժամանակը բոլորը ունենում են իրանց մասը։ Ուստի դնենք միայն այն ընդհանուր պայմանները, որոնց ազդեցութիւնը, մեր հայեացքով, աւելի ակնայայտնի է։

Սովորաբար նորածինը ծծում է մօր կուրծքը. կարող է կաթը շատ առատ լինել և ընդհակառակը շատ սակաւ։ Եւ այդ պատճառով Երեւանին կամ բոլորովին կարիք չի լինի ծծելու ժամանակը այժ գործ դնել—կաթը համարեա ինքն իրան կը գայ—կամ թէ պէտք կը լինի եռանդով աշխատել, որ իր կշռանալուն համար բաւականացուցիչ քանակութեամբ կաթ ծծի։ Այն երեխաները, որոնք կերակրվում են արհեստական ծծանոներով, համարեա, այժ գործ չեն դնում ծծելու ժամանակ։

Առաջին դէպքում Երեւան ընտրանում է հանգաթի ձեւով ստանալ իր մունդը. երկրորդ դէպքում նա կը սովորի, այսպէս ասած, աշխատանքով ձեռք բերել իր մունդը. նրա մէջ կազմակերպվում է որոշ հաստատակամութիւն, հակումն կամքի այժ գործ դնելու, որը կարող է ամրանալ, կամ ընդհակառակը թուլանալ ապագայի դաստիարակութեամբ։ Վերոյիշեալը կարող է թուալ հասարակ չափազանցութիւն. բայց չը պէտք է մոռանալ, որ մենք Երեւանների նկատմամբ ի նկատի պիտի առնենք բոլորովին ուրիշ չափ, քան թէ մեծերի վերաբերմամբ։ Բոլոր այն որոշ հմտութիւնների, մտապատկերների միաւորութեան և յիշողութիւնների գումարը, որ կազմում է հասակաւոր մարդու անձնաւորութիւնը, բացակայում է Երեւանի մէջ. նա դեռ ոչնչով չէ կարող դիմադրել արտաքին միջավայրի ազդեցութեանը։ Ծծելու դժուարութիւնը նրա համար առաջնակարգ կարեւորութեան իրողութիւն է. դա է լինում կամքի այժ գործ դնելու համար դրդող պատճառը. դա է հանդիսանում մի քանի աշխատանքներ կատարելու սովորութիւններ կազմակերպելու համար սկզբնական կէտը։

Սովորութիւնների կազմվելու դէպքում մարդու ընդունակութիւնը ծառայում է իբրև երկայրի սուր, որը կարելի է գործածել ինչպէս ի մէնա, այնպէս էլ յօգուտ նրան։ Այդ դէպքում Երեւանի բոլորովին անօգնական է հանդիսանում. հասակաւորները կարող են պատրաստել նրա մէջ այն վրայ քանի մը նոր մասեր։ Մշեցիներն սկզբունքով ընդունած են Միացեալին պահանջը՝ պայմանաւ սակայն, որ Միացեալն ալ խոստանայ բարձրացնել դպրոցին մատկարգակը և գիւղատնտեսութեան տեսակէտէն բարեփոխէ կամ գէթ գործադրութեան դնէ իր որդեգրած ծրագիրը։

Տեղւոյս Մխիթարեան վարժարանը, որ ծրագրով և բիւջէով ետ չի մնար Միացեալի Մուշի Կեդրոնական վարժարանէն, դրժբաղդաբար շատ անորոշ և տարաբաղդութեան մէջ է։ Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնը՝ տեղւոյս լուսաւորչադաւանաւորդարանին (բուն կաթոլիկ հայերը հազիւ 15-20 տուն լինին) և ազգայնոց դիմումին վրայ՝ խոստացեր էր 2000 լիրայի նոր նպաստով մը դպրոցական նոր և վառաւոր շէնք մը կառուցանել Մուշի մէջ, թէ պէտք կը լինի եռանդով աշխատել, որ իր կշռանալուն համար բաւականացուցիչ քանակութեամբ կաթ ծծի։ Այն երեխաները, որոնք կերակրվում են արհեստական ծծանոներով, համարեա, այժ գործ չեն դնում ծծելու ժամանակ։

Առաջին դէպքում Երեւան ընտրանում է հանգաթի ձեւով ստանալ իր մունդը. երկրորդ դէպքում նա կը սովորի, այսպէս ասած, աշխատանքով ձեռք բերել իր մունդը. նրա մէջ կազմակերպվում է որոշ հաստատակամութիւն, հակումն կամքի այժ գործ դնելու, որը կարող է ամրանալ, կամ ընդհակառակը թուլանալ ապագայի դաստիարակութեամբ։ Վերոյիշեալը կարող է թուալ հասարակ չափազանցութիւն. բայց չը պէտք է մոռանալ, որ մենք Երեւանների նկատմամբ ի նկատի պիտի առնենք բոլորովին ուրիշ չափ, քան թէ մեծերի վերաբերմամբ։ Բոլոր այն որոշ հմտութիւնների, մտապատկերների միաւորութեան և յիշողութիւնների գումարը, որ կազմում է հասակաւոր մարդու անձնաւորութիւնը, բացակայում է Երեւանի մէջ. նա դեռ ոչնչով չէ կարող դիմադրել արտաքին միջավայրի ազդեցութեանը։ Ծծելու դժուարութիւնը նրա համար առաջնակարգ կարեւորութեան իրողութիւն է. դա է լինում կամքի այժ գործ դնելու համար դրդող պատճառը. դա է հանդիսանում մի քանի աշխատանքներ կատարելու սովորութիւններ կազմակերպելու համար սկզբնական կէտը։

Սովորութիւնների կազմվելու դէպքում մարդու ընդունակութիւնը ծառայում է իբրև երկայրի սուր, որը կարելի է գործածել ինչպէս ի մէնա, այնպէս էլ յօգուտ նրան։ Այդ դէպքում Երեւանի բոլորովին անօգնական է հանդիսանում. հասակաւորները կարող են պատրաստել նրա մէջ այն

սակայն վերջերս Թէրզեան պատրիարքի կողմէն Մուշի առաջնորդ նշանակուած Թոփուզեան եպիսկոպոսը, նկատելով իրեն՝ ժողովրդեան կողմէն լքուիլը, ամէն ճիգ թափեց և յաջողեցաւ Թէրզեան պատրիարքի շնորհիւ առայժմ յետաձգել տալ դպրոցի շինութիւնը։ Թոփուզեան եպիսկոպոսը ամսական կը ստանայ Թէրզեան պատրիարքէն և Աստուծոյ անմիջ դառան պէս ստանձնացած կապերի Մուշի մէկ խուլ և ետ ինկած տան մէջ։ Թախիծ

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

(Ներքին գործերու մինիստրութեան շրջաբերականը նահանգային իշխանութեանց)

—

Ամբողջ օսմանեան կայսրութեան յառաջդիմութիւնն ու բարգաւաճումը և բնակչութեան բարօրութիւնը ապահովելու համար հիմնական բարենորոգումները ի գործ պիտի դրուին հոն, հետզհետէ, համաձայն տեղական բարքերուն ու պէտքերուն, և խորհրդակցելէ ետք տեղական իշխանութեանց հետ։ Սկսելու համար, հետեւեալ կարգադրութիւնները եղած են մինիստրական խորհրդի որոշումով.

1) Այն վակըֆ կալուածներն ու հաստատութիւններն, որոնց հասոյթները պէտք է յատկացուին տեղական բարենպատակ գործերու, այսուհետև պիտի յանձնուին համայնքային ժողովներուն կողմէ, համաձայն այս մասին պատրաստուելիք օրէնքի մը։

2) Իւրաքանչիւր տեղի զինուորները խառնութեան ատեն իրենց զինուորական գործօն ծառայութիւնը պիտի կատարեն իրենց պատկանած քննչութեան շրջանակին մէջ։ Միայն թէ այն պարագային, երբ կառավարութիւնը պէտք տեսնէ երկրին սահմանագլուխներէն ոեւէ մէկ կէտին վրայ զօրախմբում մը կատարելու, բոլոր զինուորներն ալ պէտք է մասնակցին անոր՝ առանց բացառութեան։ Դարձեալ կառավարութիւնը հարկադրուած ըլլալով առ այժմ զինուորագրել պատալ Հրէաները, Եսէները, Սաբրը և Հոշդի նման հեռաւոր վայրերու մէջ, այդ ուժերը պիտի առնուին իւրաքանչիւր տեղի զինուորներէն՝ համեմատաբար։

3) Նկատի առնելով այն օգուտները, որոնք առաջ կուգան մասնաւորապէս այն վայրերուն մէջ, ուր բնակչութեան մեծամասնութիւնը արաբերէն կը խօսի, բոլոր վարժարաններուն մէջ ուսուցումը արաբերէն կատարելով՝ շուտով ապահովելու համար ներկայ և ապագայ քաղաքակրթական յառաջդիմութիւնները, որոշուած է արաբերէնը ընդունիլ նախնական և երկրորդական վարժարաններուն մէջ, առաջիկայէն վերապահելով դասաւանդութիւնները արաբերէնով կատարել բարձրագոյն վարժարաններուն մէջ։

Սակայն, պաշտօնական լեզուն տարածելու նպատակով, պիտի պահպանուին նաև կուսակալութեանց կեդրոններու մէջ գտնուող իրաւունքները, ուր ուսուցումը պիտի կատարուի թիւրքերէն։

4) Ցիշեալ գաւառները զրկուած պաշտօնեաները պաշտօնական լեզուէն զատ արաբերէնի ալ ծանօթ պէտք է ըլլան. ուստի այս կէտը նկատի պիտի առնուի անոնց ընտրութեան ատեն։ Երկրորդական պաշտօնեաները կուսակալութեան կողմէ պիտի նշանակուին տեղին վրայ, համաձայն մասնաւոր օրէնքին։ Դատաւորներու և դատական պաշտօնեաներու անուանումը հարկ ըլլալով վաւերացնել սուլթանական իրաւունքով, անոնց անուանումը պիտի կատարուի կեդրոնական կառավարութեան կողմէ։

Այս կարգադրութիւնները հաղորդուեցան բոլորը, ինչ որ իրանց հաճելի է։ Ընդունենք, որ չափազանց հոգատար մայրը յաճախակի կերակրում է իր երեխային, միշտ վախենալով որ նա քաղցած է։ Երեխան ընդդիմանալ որքան էլ չը հակառակի դրան, վերջապէս դուրս է գալիս, որ նրա ստամոքսը ծանրաբեռնվում է։ Մի անգամ չափից դուրս լայնանալով՝ ստամոքսը ձգտում է այնուհետև էլ լայնանալու նոյն աստիճան. մնդի սովորական քանակութիւնը նրա համար այլ ևս անբաւականացուցիչ է թուում. զգացվում է ստամոքսի իբրև թէ դատարկութիւն, և այդ դատարկութիւնը լցնելու համար երեխան սովորականից աւելի է ուտում։

Ժամանակի ընթացքում ստամոքսային ֆունկցիաները երկրորդ տեղը դնելու և իր գործունէութիւնը աւելի բարձր ֆունկցիաների վրա դարձնելու փոխարէն երեխայի ուշադրութիւնը կամայ-ակամայ դառնում է գլխաւորապէս ուտելու վրա. հետեւաբար և նրա բոլոր զարգացողութիւնը ստանում է ոչ ցանկալի ուղղութիւն. կազմվում է երեխայի տիպը, որի համար, ինչպէս երևում է, զոյութեան ամբողջ միաքը մենակ ուտելու մէջն է կայանում։ Մայրը պարտական է յիշելու, որ մենակ մարմնից չի բաղկանում երեխան. նա ունի և հոգի, որը պահանջում է ամենամեծ խնամատար և զգոյշ վերաբերմունք դէպի ինքը։ Բացի որկրամոլութեան ընտելանալուց՝ երեխան իր կեանքում սովորում է և անկարգութեան։ Եթէ նա ուտում և քնում է ոչ խիստ որոշված ժամանակին, այլ երբ հաճելի է նրան, դրանով իսկ նա ներմուծում է իր կեանքում պատահականութեան տարր. նա ընտելանում է սանձարձակութեան, նրա թոյլ կամքը վաղնջուկ դէպքերի խաղալիք է դառնում, նրա ցանկութիւնները դառնում

պատերազմական, կրթական և էվկաֆի մինիստրութիւններուն։

Օտար քննիչներ պաշտօնի պիտի կոչուին, համաձայն իւրաքանչիւր նահանգի պէտքերուն և հարկ եղած վարկերը պիտի յատկացուին իւրաքանչիւր վայրի՝ տեղական բիւջէներու բացերը գոցելու համար։ Նահանգային ընդհանուր ժողովներու կողմէ տրուած որոշումները անյապաղ գործադրութիւն պիտի ստանան։ («Բիւզ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆԸ

—

Մեր առօրեայ կեանքն որոշ ժամանակներ ենք բաժանում, օրինակ՝ աշխատանքի, հանգստութեան, ճանապարհորդելու և այլն, և այլն։

Այժմ դպրոցական, ուրիշ խօսքով՝ հոգաբարձական և ուսուցչական «տակտ-փոդրաթի» սեզօնն է։

Լրագիրների (ի հարկէ միայն հայերէն) առաջին և վերջին էջերը լի են նման յայտարարութիւններով. մէկը միւսին համեցէք է անուն։ Աղա հոգաբարձուն յայտարարում է. «Հարկաւոր է ճեմարանաւարտ, թեմականաւարտ, գիմնազիաւարտ ցենզաւոր ուսուցիչ կամ ուսուցչուհի, որը դասաւանդի բոլոր առարկաներից, լինի հմուտ ու փորձառու, ունենայ աջող ձայն (տէրտէրին տիրացութիւն անէ, քեօխվին պրօտօկոլ բաղօրա գրի)» և այլն։

Միւս կողմը, ցաւօք սրտի կարդում ենք, մրգի բազարի գովխտ-ըէկլամներով՝ իրանց բազմակողմանի պատրաստականութիւնն են յայտնում ուսուցիչ-ուսուցչուհիները։ Այդպիսի պատրաստակամ ուսուցիչը կամ վարժուհին գալում է, թէ ինքը կարող է բոլոր առարկաները դասաւանդել, եղել է Մոսկվայում, Պետերբուրգում, ունի մի երկու տարվայ փորձառութիւն։ Թէ որքան փորձառութեամբ դպրոցի և շրջապատի գլխին, դա մէկ ինքը և մէկ էլ իր պաշտօնավարած շրջանի հասարակութիւնը գիտէ (խօսքս բացառութիւնների մասին չէ, ի հարկէ)։

Եթէ մենք հետևելու լինենք մեր դպրոցներում կատարված վերջին տարիների անց ու դարձին, պիտի ամօթով և սոսկումով երեսներս շուռ տանք այն բօմաններից ու դրամներից, որոնք կատարվել են մեր կեանքում մեր պատուական թարմ ցենզաւորների շնորհիւ։ Օր. Աշտարակում, Կողբում, Իգդիրում, Խաթունարխ, Ղամարլու, Շիրվանցոց գիւղում, Աւտուր, Աշան, Մեղրի, Ագուլիս, Մեծ-Ղարաքիլիսա, Բագու և դեռ քանիսները կան թւելու, մէկը միւսից

Արդեօք մեր խնամակալ բարձր վարչութիւնները տեսնում են, լսում են կրթական տաճարներում կատարված կոմէդիաների ու ոճիրների մասին, թէ սովորական, բնական համարելով՝ հանգիստ կերպով կուլ են տալիս։

Երկար տարիներ ապրելով դաւառում, գիւղացիների մէջ, մօտ ծանօթ ենք նրանց նիստ ու կացին, նրանց հաւատամքի ու պաշտամունքներին, որոնց ըստ իրանց հասկացողութեան ընդունում են մեր շինականները՝ որպէս բարոյական հիմունք իրանց կեանքում։ և որոնցով առաջնորդվել են անցեալում ու տակաւին ակնածութեամբ են վերաբերվում այժմ։

Գիւղացին ուսուցչի անձնաւորութեան վրա նայում է որպէս մի կատարելութեան տիպարի, մի անբիծ սրբութեան։ Մեծ հաւատով այդ կրթիչ դաստիարակից է սպասում իր զաւակի բարեկեցութեան, ապագայ մարդու դիրքի, հասարակութեան բաղդի որոշումը։ Նա պաշտում է ուսուցչին, եթէ սա իր դերի մէջն է և, ընդհակառակը, ատելով ուսուցչին՝ ատելութեամբ է վերաբերվում մեր կեանքը լուսաւորող դպրոցին։

Արդ, դպրոցական յարգոյ խնամակալներ, թեմ. խորհուրդ, թեմ. տեսուչ, հոգաբարձութիւն, ուսուցչութիւն, ձեզ է յանձնած հարիւրաւոր անմեղ մանուկների յոյսերով լի ապագան. խորհրդակցեցէք, օրէնքներ մշակեցէք, կարգեր սահմանեցէք, որ շրջանակից դուրս եկած զանցառուներին արտաքսեցէք այդ մաքուր ասպարէզից։ Ով քաջութիւն և տոկունութիւն ունի պարտաճանաչութեամբ, անձնազոհութեամբ ստանձնած պարտաւորութիւնները սրբութեամբ կատարելու, թող նա մօտենայ դպրոցական ասպարէզին. ապա թէ ոչ՝ բազարային յայտարարութիւններով բաւական է կրթական տաճարները դարձնէք մի «ցիրկ», ուր կարելի են համարվում ամէն տեսակ զաւրելի կոմեդիաներ, նոյն իսկ ոճիրներ գործել։

Ո՞ւմ վրա է ընկնում արդեօք այդ պատասխանատուութիւնը, հարցնում ենք մեր բարձր իշխանութիւնից։

Սաթ. Զաքարեան

Պեատիգօրսկ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

IX

«Не было печали, да черти накачали».

«Մշակի» հակառակորդ գաղիռների բանակին այժմ քոթոթներ են աւելացել և իրանց վայրահաչութիւններով օրէ-ցօր լցնում են «Բագուի Ձայն» անուանվող quasi օրաթերթը։

Եւ ամէն անգամ, երբ նրանց նիւթը վերջանում է, երբ լրագրի էջերը լցնելու համար հարկաւոր է որևէ բան գրել, իսկոյն բռնում են «Մշակի», նրա խմբագիրների ու աշխատակիցների օձիքից։

Բայց դարձեալ «Հարցկոնը» այս անգամ ոչ նման է դուրս եկել, և այն էլ Բագուում։

Վերցրէք «Բագուի Ձայնի» № 108-ը, և մի շարք անհամ, անալի նիւթերի ու այս ու այն թերթերից քաղված տեղեկութիւնների մէջ ձեր ուշադրութիւնը կը գրաւէ «Արա՛ս» կեղծանուան տակ թաքնված մի պարոնի (չէ՞ որ «Մշակի» հակառակորդները երբէք քաջութիւն չեն ունենում իրանց իսկական անունով հրապարակ գալու) յօդուածը «Դատ քո ձեռքից» վերնագրով և ստերի, կեղծիքների ու պրովոկացիայի անսպառ աղբիւրով։

Կարդացէք, ընթերցող, այդ յօդուածը, կարդացէք ուշադրութեամբ. եթէ միայն դուք համբերութիւն կունենաք կարդալու ժամրոտ վէրքերից հոսող այդ թարախի աղբիւրը, որը յօդուածն անունն է կրում և որը վետերված է «գրական ու հասարակական» անուանվող օրաթերթի էջերում, և դուք այն ժամանակ միայն կը զգաք, թէ ինչի է ընդունակ չար նախանձն ու այդ ստոր կիրքը։

Արժէ, կրկնում եմ, այդ յօդուածը կարդալ և կարդալ ուշադրութեամբ. և ես խորհուրդ կը տայի «Մշակի» ընթերցողներին անելու այդ։

Յօդուածագիր պարոնը, ինչպէս երևում է, չէ կարողանում տանել Բագուի ամարային ոսթը, և շորը այնքան է ապրել նրա վրա, որ նա զառանցանքների մէջ է ընկել ու իր թունաւոր նիւթերը ուղղում է ոչ ըստ պատկանելոյն, որովհետև այն բոլորը, ինչ որ նա վերագրում է «Մշակին», բոլորովին այլ աղբիւրներից են սկիզբ առել։

Եւ ամբողջ յօդուածի մէջ միայն մի կտոր

են անզգալելի և արտայայտվում բարձրաձայն ճիչով։

Այժմ ընդունենք, որ երեխան ոչ մի բոպէ մենակ չէ թողնվում, ամբողջ ժամանակ նրա մօտն է լինում մայրը կամ դայեակը. նրանք միշտ խօսում են նրա հետ և զուարճացնում նրան։ Սկզբից, շատ կարելի է, երեխան զգում է մենակութեան պահանջ, որպէս զի ամբողջովին նուիրվի իր մէջ զարթնող մտածման գործունէութեանը, բայց որովհետև նա չէ կարող ասել այդ բանը, իսկ նրան ոչ մէկ բոպէ մենակ չեն թողնում, ուստի վերջ է վերջոյ երեխայի այդ պահանջը խեղդվում է։ Մշտական շրջապատողներին նա այնքան է ընտելանում, որ մենակ մնալու դէպքում անախորժութիւն է զգում. նրան պակասում են արտաքուստ սովորական զրգռումները. նա սկսում է լալ և յամառութիւն անել։ Պէտք է յիշել, որ երեխան նոր միայն սկսում է ապրել գիտակցաբար. նա ստանում է իրա համար նոր շատ զգացումներ. այդ բոլորը նրան պէտք է լուծել, իւրացնել. նրա քնքոյշ և դեռ չը կազմակերպված ուղեղը լարված գործում է, որպէսզի ծանօթանայ ինչպէս արտաքին աշխարհի, նոյնպէս և իր սեփական մարմնի հետ, և ահա այդ եռուն գործունէութեան ժամանակ՝ երեխային ոչ մի բոպէ մենակ չեն թողնում. նրան շարունակ հեռու են պահում ներքին, մտաւոր աշխատանքից։ Պարզ է, որ նա բոլորովին հնարաւորութիւն չէ ունենում հարկ եղած ձեւով լուծելու իր տպաւորութիւնները. մինչև անգամ միաժամանակ մի քանի զանազան տպաւորութիւններ ստացող հասակաւոր մարդն էլ, շատ անգամ, ընդունակ չէ լինում ինքն իրան ուշիր հաշիւ տալ այդ տպաւորութիւնների ատիթով։

Այսպիսով հասակաւորները ամբողջ ժամանակը զուարճացնելով երեխային՝ դանդաղեցնում են նրա զարգացողութեան կանոնաւոր ընթացքը, իսկ մի քանի դէպքերում մինչև անգամ ուղղակի կանգնեցնում են. օրինակ, չեն թողնում երեխային մաքի երկարատև աշխատանքի սովորելու և միևնոյն ժամանակ հասկացնում են արտաքին միջավայրից կախումն ունենալու պարտադրութիւն։ Կախումն ունենալու այդ պարտադրութիւնը ապագայում նրա կեանքի մէջ կարող է անդին և անհաճոյ դեր խաղալ։ Հետևապէս անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ երեխային մենակ թողնել. այդպիսով նա ընտելանում է մենակ մնալ իր զգացմունքների հետ, սովորում է լուծել այդ զգացումները մի խօսքով՝ սովորում է մտածել։

Ցաւալի է նաև, թէ ինչպէս թոյլ ու անզարգացած է լինում փոքր երեխաների յիշողութիւնը. միևնոյն տպաւորութիւնները պէտք է շարունակ կրկնեն նրանք, որ իրանց յիշողութեան մէջ մի բան պահեն։ Ահա թէ ինչու երեխաները իրանց ընաւորութեամբ պահպանողական են. նրանք սիրում են, որ իրանց շրջապատած լինեն միևնոյն առարկաները։ Եթէ երեխան ամէն օր իրան համար շատ նոր անձնաւորութիւններ տեսնի, միշտ նրան պարզևեն նոր զանազան տեսակի շատ խաղալիքներ, ամէն օր նրան տանեն զբօսնելու նոր տեղեր, հասկանալի է, որ այդքան նոր տպաւորութիւններ ստանալով՝ երեխան անկարող է այդ ամենը հասկանալ ու յիշել։ Նրա մտածելու ընդունակութեան թուլութեան պատճառով նրան դրա համար հարկաւոր է համեմատաբար երկար ժամանակ։ Մինչև անգամ հասակաւոր մարդն էլ տեսնելով իրան անծանօթ շատ առարկաներ, լինելով, օրինակի համար, մի որևէ մեծ թանգարանում,

մանակը զուարճացնելով երեխային՝ դանդաղեցնում են նրա զարգացողութեան կանոնաւոր ընթացքը, իսկ մի քանի դէպքերում մինչև անգամ ուղղակի կանգնեցնում են. օրինակ, չեն թողնում երեխային մաքի երկարատև աշխատանքի սովորելու և միևնոյն ժամանակ հասկացնում են արտաքին միջավայրից կախումն ունենալու պարտադրութիւն։ Կախումն ունենալու այդ պարտադրութիւնը ապագայում նրա կեանքի մէջ կարող է անդին և անհաճոյ դեր խաղալ։ Հետևապէս անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ երեխային մենակ թողնել. այդպիսով նա ընտելանում է մենակ մնալ իր զգացմունքների հետ, սովորում է լուծել այդ զգացումները մի խօսքով՝ սովորում է մտածել։

Ցաւալի է նաև, թէ ինչպէս թոյլ ու անզարգացած է լինում փոքր երեխաների յիշողութիւնը. միևնոյն տպաւորութիւնները պէտք է շարունակ կրկնեն նրանք, որ իրանց յիշողութեան մէջ մի բան պահեն։ Ահա թէ ինչու երեխաները իրանց ընաւորութեամբ պահպանողական են. նրանք սիրում են, որ իրանց շրջապատած լինեն միևնոյն առարկաները։ Եթէ երեխան ամէն օր իրան համար շատ նոր անձնաւորութիւններ տեսնի, միշտ նրան պարզևեն նոր զանազան տեսակի շատ խաղալիքներ, ամէն օր նրան տանեն զբօսնելու նոր տեղեր, հասկանալի է, որ այդքան նոր տպաւորութիւններ ստանալով՝ երեխան անկարող է այդ ամենը հասկանալ ու յիշել։ Նրա մտածելու ընդունակութեան թուլութեան պատճառով նրան դրա համար հարկաւոր է համեմատաբար երկար ժամանակ։ Մինչև անգամ հասակաւոր մարդն էլ տեսնելով իրան անծանօթ շատ առարկաներ, լինելով, օրինակի համար, մի որևէ մեծ թանգարանում,

կայ, մի փոքրիկ կտոր, որը իրանից ճըշմարտութիւն է ներկայացնում և որից ոչ «Մշակը», ոչ էլ մշակականները չեն հրաժարվել. այդ այն է, որ պարոնը ասում է. «Ահա քանի տարի է, «Մշակ», որ բռնել ես Դաշնակցութեան օձիքից և բաց չես թողնում»։

Ճիշդ է, շատ ճիշդ. ահա քանի տարի է՝ «Մշակը» բռնել է «դաշնակցական» անունը իրանց վրա կլսող և ազգի տունը իրանց աբրաքներով ու գործունէութեամբ քանդող մարդկանց օձիքից (և ոչ Դաշնակցութեան օձիքից, որովհետև Դաշնակցութիւնը իբրև մի կուսակցութիւն իր գործունէութեան առաջին շրջանում, երբ նա ունէր գաղափարական ուղղութիւն և «ղօշիները» հանդէս չէին եկել, յարգելի է եղել [«Մշակի» համար) և այդ՝ «Մշակի» ազգային գործունէութեան ամենափայլուն էջերից մէկն է, որ նա ուշադրութիւն չը դարձնելով ոչ սրի, ոչ հրի, ոչ սպառնալիքների վրա՝ իր բարոյական պարտքը համարեց պարզելու հասարակութեան առաջ Դաշնակցութեան ամենքի համար յարգելի անուան տակ պատսպարված և պատսպարվող աւազակամբարների ու ղուլդուրների վանդալական արարքները։ Եւ ապագայ պատմութիւնը միայն կարող է պարզել ու չափել «Մշակի» արած այդ քայլի ամբողջ վեհութիւնը, բայց ոչ «Բագուի Զայնի» քոթոթները։

Զը կամենալով վայրահաչ պարոնի պրոֆոկացիաներին նոյնով պատասխանել, ես միայն կը կամենայի ցոյց տալ, որ այն բոլոր մեղադրանքները, ինչ որ պ. Արա–սը կամենում է փաթաթել «Մշակի» վզին, հենց իրանց է վերաբերում, ուստի պարտք եմ համարում կէտ առ կէտ հետևել այդ, «Հօրիզօնի» կողմից կրակոտ անուանված յօդուածին։

«Հեռու Սիբիրում ու մութ բանտերում մեր եղբայրը ու հայրերն են կենդանի թաղված... այդ բոլորը դու տեսար, էլ ինչ ես ուզում...»։

Այո, շատ ճիշդ է. սրտի անհուն կսկիծով, դառը վշտով, մենք այդ բոլորը տեսանք, շնորհիւ... ձեր շարքերից դուրս եկած, ձեր կրթած ու դաստիարակած դաւաճանների և մատնիչների։

«Ասա, ինչ գործ ունես Թիւրքիայում. քանի կաթիլ արիւն ես գցել այնտեղ՝ սուլթանական արհաւիրքների զէմ մղված կռիւներում։ Եղբա՞յրդ է ընկել այնտեղ թէ ընկերդ է վիրաւոր կուրծքը բռնած՝ քարերը չանգռտել։ Շատախի լեռներում քիւրդերի յարձակումների առաջ ես ծառացել թէ հայդուկի տոպրակն է մէջքդ քերել... Զէ որ դու նրանց միայն հայհոյել ես»...

Ամենատոր հոգիները միայն կարող են ազգային վեհ գործի անձնազոհ հերոսներին հայհոյել, և «Մշակը» տասնեակ տարիների ընթացքում միայն նրանց սուրը յիշատակը չերմ յարգողն է եղել։ Թերթեցէք «Մշակի» համարները տարիների ընթացքում, և եթէ ազնիւ էք, եթէ կոյր կիրքը չէ առաջնորդում ձեզ, ցոյց տուէք գոնէ մի տող, որի մէջ «Մշակը» հայհոյած լինի Թիւրքիայի ազատագրական գործի իսկական վեհ հերոսներից մէկի յիշատակը։ Դուք, պարոնայք, պրոֆոկացիա էք անում և ամենատոր տեսակի պրոֆոկացիա։

Ասացէք, ի սէր Ալլահի, ինչ կապ կայ Թիւրքիայի արհաւիրքներում արիւն թափողների, վիրաւոր կուրծքը բռնած քարերը չանգռտող հերոսների, Շատախի լեռներում քիւրդերի առաջ ծառացողների և տոպրակը մէջքները քերող անձնազոհ հայդուկների ու ձեր, փառաւոր կաբինէտներում նստած, հաւանական սիգարը բերանխխա յոգնում է և գնում տուն գլխացաւով։ Երեխայի համար այդ բոլորը, ի հարկէ, կունենայ անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն. նա դեռ միջոց չէ ունենում լուծելու տպաւորութիւնների մէկ հոսանքը, երբ վրա է գալիս ուրիշը՝ բոլորովին նորը։ Նրա մտաւոր հորիզոնը ընդարձակելու փոխարէն, այդ տպաւորութիւնները միայն յոգնեցնում են նրա թոյլ ուղեղը։

Վերջապէս այդ տեսակ անկարգ և լարված աշխատանքից, այդ մշտական յոգնածութիւնից ջղային համակարգութիւնը այնքան յոգնում է, որ դառնում է չափից դուրս դիւրագրգիռ և զգայուն։ Երեխան ըստ երևոյթին առանց պատճառի յամառում է, ամեն մի չնչին պատճառից լալիս. այլապէս նա ուղղակի չափից դուրս յոգնում է նրա համար ուժից դուրս աշխատանքից։

Հետևապէս անհրաժեշտ է, որ երեխան գոնէ իր առաջին տարվայ ընթացքում իր ժամանակի մեծ մասը սովորաբար անցկացնի միենոյն շրջապատող հանգամանքներում, խաղայ սովորական խաղալիքներով, մանգայ միևնոյն տեղերում։ Այդ տեսակ պայմաններում նրա զարգացողութիւնը կանոնաւոր է լինում. շարունակ կրկնութեան շնորհիւ նա պլնդ յիշում է մի քանի առարկաները և նրանց յատկութիւնները։ Նրանում ստեղծվում են այս ու այն մտապատկերների ուժեղ միաւորութիւններ, որպիսի հանգամանքը թեթևացնում է նրան շրջապատող արտաքին աշխարհի հետ ունեցած հեռաւոր ծանօթութիւնը. նրա ուղեղը վերջապէս չէ յոգնում, այլ ուղեղը կը զարգանայ։ Ընդհանրապէս ասած՝ չափից դուրս հոգացողութիւնները թուլացնող ու փչացնող ազդեցութիւն են ունենում երեխայի վրա։ Եթէ երեխան ընտելացել է, որ բան կերակրում են երբ ինքը կամենայ, ներիդ ճառողների միջև։

Ինչու էք անձնազոհ հերոսների անունների հետ թաղնվում։ Զէ որ այդ արհաւիրքների մէջ դուք ոչինչ, ոչինչ չէք կորցրել, այլ միայն շահել էք։ Էլ ինչու էք այսօր նրանց արածները ձեզ համար վահան դարձնում։

Հռոմի սագերին էք ուզում նմանել։

Լաւ։

Ձեր պապերը Հռոմն են ազատել, հաւատում ենք, բայց դուք, դուք Եւրոպայի մայրաքաղաքները չափչփող, Ժընեվի լճակի գեղեցիկ տեսարաններով հիացող ու Թիֆլիսի փառահեղ կաբինէտներում հանգըստացող պարոններ, դուք ինչ էք արել, այդ ասացէք, այդ է հետաքրքրական։

Թէ այդ ձեռնտու չէ ձեզ համար։

«Մեր յայտնի բանաստեղծ Յովհ. Թումանեանի սրտին քո նետերդ ուղղեցիր, մեր նշանաւոր հեղինակ Ահարոնեանին հայհոյեցիր, մեր քրանչան աշխատող Լէօի սիրտը թռնաւորեցիր»։

Մեծութիւններ, մեծութիւններ և մեծութիւններ, բոլոր, բոլորը ձերը, որոնց քեֆին կպչելը չի կարելի, որոնք եթէ ասում են՝ մածունը սև է, պէտք է ասել՝ սև է։

Դժբաղդաբար, պարոնայք, «Մշակը» և մշակականները այդ անել չեն կարող և նրանց համար սևը սև է, սպիտակը սպիտակ, չը նայած որ հակառակը պնդեն աւելի բարձր մեծութիւններ։

Թումանեան, Ահարոնեան, Լէօ «Մշակի» համար յարգելի գործիչներ ու գրողներ կարող են լինել. բայց նրանց սխալներին և դիտաւորեալ կեղծիքներին «Մշակը» փակ աչքերով նայել չէ կարող, նրանց արժէք ծառայութիւն մատուցանել չէ կամենում։

«Հայհոյեցիր գրական ֆոնդը մեր հայազգային նշանաւոր տօները կռուով համեմեցիր»։

Այդ դարձուածքի համար, պ. Արա–ս, հացէն սխալ էք վերցրել։ Ասենք՝ դուք մեղաւոր չէք. երևի, ինչպէս վերև ասացի, Բագուի զոհերը ձեզ վրա ազդել, որ դուք ձեր և ձեր բարեկամների իսկական հացէնին էլ էք մոռացել։

«Այսպիսի վեհ բօպէներում, այս խորհրդաւոր վայրկեաններում, երբ «միութիւն», «մի սիրտ, մի հոգի» աղաղակները պէտք է թնդան ամեն տեղ, ուր հայեր են գտնվում, քո բռնած դիրքդ նախանձելի չէ, «Մշակ»։

Անպատկառ ստի, անամօթ կեղծիքի մի փառաւոր նմուշ են այս տողերը։

Ով աչքերը ունի կարդալու և խելք՝ կարդացածը հասկանալու, նա պէտք է շատ լաւ տեսնի, որ թէ տարիների ընթացքում և թէ մանաւանդ այժմ «Մշակը» այդպիսի միութիւնների ամենաջերմ պաշտպաններից մէկն է եղել և դեռ մի քանի շաբաթ առաջ էր, որ «Մշակը» առաջինը ցնծութեամբ ողջունեց Եգիպտոսի հայ կուսակցութիւնների միութեան լուրը իր էջերում։

Ու անգնահատ ու ստոր հոգիները միայն կարող են այդ աստիճան կեղծել, իրանց նպատակները առաջ տանելու համար։

«Լուիր և վայելիր 40-ամեայ յօբելեանիդ ժողովք արած 40 հազարդ»։

Ահա այս նախադասութիւնը պէտք էր յօդուածի սկզբում դնել և այն ժամանակ ամեն ինչ պարզ կը լինէր։

Այո, պարոնայք, ահա տարի ու կէս է, ձեզ հանգիստ չեն տալիս, ձեր քունը խանգարել են այդ 40 հազարները և հակառակն այն լայնածաւալ ցոյցերը, որ ցոյց տուեց հայ հասարակութիւնը, իր անկաշառ «Մշակի» 40-ամեայ յօբելեանի օրը, որը դուք մինչև այժմ մարսել չէք կարողանում։

Եւ ահա այդ պատճառով դուք ամեն անգամ յարմար դէպք եղած ժամանակը գլուխներդ դուրս էք հանում ձեր ընկերից և...

Пошла писать губернія.

Եւ ձեր այդ բոլոր վայրահաչութիւնների դէմ «Մշակը» իր գլուխը միշտ բարձր պահած կարող է կրկնել յայտնի փիլիսոփայի խօսքերը.

«Я не придаю какой нибудь цѣны безстыдной сплетнямъ клеветниковъ, или мелкихъ завистниковъ, всегда готовыхъ утопить человѣка, достигшаго успѣха».

Հայ հասարակութիւնը բարեբաղդաբար շատ լաւ է ճանաչում թէ «Մշակին», պարոնայք, և թէ ձեզ նմաններին, որոնց խղճի վրա միշտ ծանրացած պէտք է լինեն ձեր պրոֆոկացիոնների անթիւ զոհերի ուրուականները։

Մինթէ բաւական չէ յիշել այժմ տարապիր, Պարիզի յետ ընկած փողոցներից մէկում, մի անշուք խրճիթում հիւանդ, ծեծված Սպանդարեանին, որին ձեր «Դատ քո ձեռքից» յօդուածների նման պրոֆոկացիաները այդ օրին հասցրին։

Մինթէ ամօթ ու պատկառանք չը պիտի զգաք դուք երբէք *)։

Վաղարշակ Թումանեան

Բագու

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Էլի անաջող տարի

Նալբանդ (Ալէքս. գաւ.), 30 յուլիսի

Անցեալ տարին մեր գիւղացու համար աջող տարի էր. երկրագործը այնքան բերք ստացաւ իր ցանած արտերից, որ բաւականացաւ մի ամբողջ տարի։ Իսկ այս տարի բոլորովին հակառակ պատկերն է ներկայացնում անցեալ տարվայ։ Մայիսի վերջերից սկսած մինչև օրս շարունակվող երկարատև երաշտը այրեց ու հողին հաւասարեցրեց բոլոր բուսականութիւնը։ Այդ միջոցին մի երկու անգամ եկած ոռնոտ ամպրիները անկարող եղան տօթից տապակված արտերին ու արօտներին վերակենդանացնել։ Դրա հետևանքն այն եղաւ, որ հացաբոյսերի աճեցողութիւնը անկատար մնաց։ Հիմա մեզ մօտ եռուն հունձ է, բայց հացաբոյսերը այնքան կարճ են մնացել, որ դժուար է գետնդի բանում. դանակ ձեռքիրով են հաւաքում։ Բացի այն, որ արտերից անցեալ տարվայ համեմատութեամբ աւելի քիչ հունձ է ստացվում, ստացվածն էլ դարձեալ անարատ չէ։ Հասկերի մի մասը բոլորովին դատարկ է, մի մասն էլ վատ։ Հիմա ժողովուրդը աւելի մտածում է անասունների կերի մասին։

Հենց այժմանից եղած դարմանի քթոցը (մօտ 3 պուդ), որ անցեալ տարի արժէր 25 կ., այժմ 50 կ. են ասում։ Մի սայլ խոտը, որ առաջ ծախվում էր 4—5 ր., հիմա ծախվում է 8—10 բուբլով։ Հացի գինը դեռ անորոշ է։ Եթէ այս կողմերը հացը աւելի թանգանայ, այն ժամանակ Ռուսաստանի ալիւրը էլի իր պատւաւոր տեղը պիտի բռնէ մեզանում։ Այսպիսի ձախորդ տարիների յաճախ պատահելն է պատճառը, որ յուսահատված ժողովուրդը շարունակ կրկնում է թէ՝ «ռաշպարի օրորոցը կտրվի, ապրելով մեռաս, օր մը չը տեսաս»։

Այս տարվայ հաղագիտ երաշտը խիստ ազդել է մեր գիւղացիների վրա, դրա համար մտադիր են «Զիլչանա» ձորի ջուրը հանել դաշտի վրա. եթէ այդ աջողվի, գիւղը կազատվի այսպիսի նեղ օրերից։

Ցոմկ. Համբարեան

*) Կարող ենք հաւատացնել մեր թղթակցին, որ Արա–սի պէս գրչի ուտպակները երբէք ամօթի և պատասխանի զգացումն չեն ունեցել, որ կարողանան երբեմն արտայայտել։ Խմբ.

Լուրեր Ցարսկիէ-Կօլօդցիից

Ցարսկիէ-Կօլօդցի, 22 յուլիսի

Էջմիածնի սինօդի հրամանով Ց. ք. Գրիգորեանը ձեռնադրված էր Ցարսկիէ-Կօլօդցի, շրջակայ գիւղերի և Նաւսմխարի ուխտատեղի վրա։ Երկու տարի առաջ Արտէմ Օթարեանը խնդիր տուեց հոգևոր իշխանութեան, առաջարկելով տեղիս դպրոցին նուիրել մի գումար, որը տարեկան տոկոս բերէր մշտական 360 ր. այն պայմանով, որ դպրոցն անուանվի «Օթարեան» և քահանայից առնվին շրջակայ գիւղերը։ Սինօդը մերժեց Օթարեանի կտակը։ Սրանից յետոյ շրջակայ գիւղերի գիւղացիները խնդիր ուղարկեցին, խնդրելով անջատվել Ցարսկիէ-Կօլօդցիից և միանալ Նուկրիանի հետ։ Սինօդը մերժեց գիւղացիների խնդիրը և խիստ յանդիմանութիւն կարդաց Սարգիս ք. Ասլամազեանցին՝ գիւղացիներին գրգռելուն համար։ N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Մի քանի տարի սրանից առաջ Վեր-բայի քաղաքային այգում ձեռնարկվել էր երկու մեծ աւազաններ փորել տալ՝ իւրաքանչիւրը 4 արշին խորութեամբ՝ տղամարդկանց և կանանց համար լողարաններ պատրաստելու նպատակով։ Դուման դրա համար յատկացրել էր անհրաժեշտ գումարը։ 15,000 ր. ծախսվեց, աւազանները շինվեցին, սակայն այնքան ցածր Կուր գետի մակերևոյթից, որ ջուրը կամ պէտք էր դուրս հանել մեքենայով և կամ պիտի մնար ու նեխվէր։ Նկատի առնելով, որ այդ աւազանները չը հասան իրանց նպատակին և լողարանի համար շատ անյարմար են ու նոյնիսկ վնասակար, վարչութիւնը վճռել է լցնել տալ բոլորովին և նրանց տեղում շինել տալ երկու շատրուան՝ ծաղկանոցով։ Շատրուանները պահանջում են 25,000 ր. ծախք, որը իր վրա է առնում այդու կապալառուն։

— Յուլիսի 31-ին քաղաքային վարչութիւնը [illegible] փակել Վերայի կամուրջից վերև գտնվող լողարանը, տեխնիկական զննութեան ենթարկել, խնդրել ոստիկանապետին ոստիկանական հերթապահութիւն նշանակելու, և այլևս թոյլ չը տալ սահմանված թւով լողացողներից աւելի մարդ։ Այդ կարգադրութիւնն անելու պատճառ է եղել այն հանգամանքը, որ յուլիսի 31-ի երեկոյեան ժ. 7-ին հերթի սպասող բազմաթիւ ժողովրդի ծանրութիւնից և լողացողների անգին բազմութիւնից տախտակամածը իջել է և տախտակամածի վրա հանված շատերի հագուստները ջուրը սկսել է տանել ու անգին իրարանցում է առաջ բերել լողացողների մէջ։ Նրանք, որոնք չեն կարողացել բռնել իրանց հագուստները, տուն են վերադարձել սպիտակեղէններով միայն։

— Թիֆլիսի քաղ. վարչութիւն յանձնարարութեամբ սպանդանոցի կառավարիչ անասնաբոյժ Վ. Լանգ ձեռնարկել է կազմելու նոր սպանդանոցի ծառայողների նախագիծը և վերաքննելու քաղաքային ինքնավարութեան հրատարակած պարտադիր կանոնները մսագուներ մորթելու, միսը պահելու վերաբերեալ և այլն։ Նախ քան այդ նախագծերը վարչութեանը և դումային ներկայացնելը, Լանգը կը ներկայացնի քաղ. սանիտարական-բժշկական խորհրդի քննութեան։

— Իշխ. Պ. Ի. Թումանովի կողմից քաղաքին նուիրված յայտնի բարեգործներ Կ. Եա. և Ս. Կ. Զուբալովների նկարները քաղ. վարչութիւնը յուլիսի 31-ին որոշել է կախել մէկը Ժողովրդական Տանը, իսկ միւսը՝ երեխաների հիւանդանոցում։ Իշխ. Թումանովի այդ նուիրաբերութեան համար որոշված է զեկուցանել դումային և շնորհակալութիւն յայտնել նուիրողին։

— Մեզ հաղորդում են, որ Մէյդանի ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութիւնը բողոք է ներկայացրել Էջմիածնի սինօդին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի կարգադրութեան դէմ՝ հոգաբարձական նոր ընտրութիւն կատարելու, և խնդրել է, ի նկատի ունենալով այդ ընտրութիւնների ապօրինութիւնը, բեկել նրանց և վերականգնել նախկին հոգաբարձութիւնը իր պաշտօնում։

— Դումայի էլեքտրաքարշային մասնաժողովում հարց է յարուցված միջնորդել վարչութեան առաջ, որպէսզի յատուկ յանձնաժողով նշանակվի դիտելու այն բոլոր սալայատակները, որոնց կանոնաւոր պահելու պարտականութիւնը ընկնում է էլեքտրաքարշի վարչութեան վրա, նոյնպէս և բոլոր էլեքտրաքարշի գծերը։

— Թիֆլիսի քաղ. վարչութեան քարտուղար Ս. Դանդուրովի արձակուրդում եղած ժամանակ նրա պարտականութիւնները ստանձնել է Լ. Լէյնարդտը։

— Ներկայ տարվայ այս անցած 7 ամսվայ ընթացքում Թիֆլիսի Բուսաբանական այգին յաճախել են մինչև 48,000 հոգի։

— Ընդունելութեան քննութիւնները Թիֆլիսի 3-րդ տղայոց գիմնազիայում տեղի կունենան պատրաստականում և I դասարաններում, նոյնպէս և գիմնազիայի աշակերտների լրացուցիչ քննութիւնները օգոստոսի 21-ին։ Խնդիրները կընդունվեն մինչև օգոստոսի 17-ը։ Մնացեալ դասարաններում ընդունելութիւն չը կայ՝ ազատ տեղեր չը լինելու պատճառով։ Քննութիւնների սկիզբն է առաւօտեան ժամը 8½-ին. ուշացողներին չեն թոյլ տայ մասնակցելու քննութեան։ Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 2-ից։

— Շօլլարի ջրանցքի գծի վրա յաճախակի ընդհարումներ են տեղի ունենում [illegible] բանուորների միջև։ Վերջիններս սիստեմատիկ կերպով արգելք են լինում ծառայողներին գոյքը ընդունելու գործում, մինչև իսկ մի քանի մեքենաներ փաթաթել են շղթաներով և կողպէքով փակել։

— Կ. Պօլսից եկած մի հայ տիկին՝ Միսանձար Յովհաննիսեանը՝ եկած լինելով Թիֆլիս որևէ աշխատանք ճարելու և չը գտնելով այդպիսին՝ մնացել է անելանելի դրութեան մէջ։ Վերադառնալու համար չունի միջոց։ Ժամանակաւորապէս գտնվում է քաղաքային գիշերային ապաստարանում։ Բարեգործ անձանց օգնութիւնն է խնդրվում տիկնոջը իր հայրենիքը ուղարկելու համար։ Նուէրները կարելի է ուղարկել «Մշակի» խմբագրատան գրասենեակին։

— Էջմիածնից մեզ հաղորդում են, որ նորերս վարդապետութիւն ստացած Գէորգ արեղայ Զէօրէքչեանը (առաջ սարկաւագ) նշանակվում է Նոր-Նախիջևանի յաջորդ։ Ընտրութիւնը աջող են համարում։

— Բորժոմից մեզ գրում են. «Յուլիսի 31-ին, չորեքշաբթի, առ. ժամը 9-ին, օրը ցերեկով կատարվեց այստեղ մի աւազակային յարձակում։ Հայ կոմիսիոնէր Օվէնես Բորժոմի պօստից ստանալով մօտ 1000 ր.՝ վերադառնում էր երկաթուղային կայարանը, երբ ճանապարհին ենթարկվեց յարձակման 4 անյայտ անձերի կողմից, որոնք պռատով «руки вверхъ» և ուղղելով ատրճանակը նրան՝ կապում են նրան և հետները տանում մօտակայ անտառը, որտեղից և բարձրանում են սարերը։ Թէև մի ժամ յետոյ ոստիկանութիւնը հետամուտ եղաւ չարչարանքի։ Առաջին իսկ երեխայական տարիներում մանուկի կրած զրկանքները, օրինակ, կողմի վերաբերմունքը նրա հետ, որքան և իցէ, իւրաքանչիւր խելացի դաստիարակութեան բացակայութիւնը թողնում են նրա հոգեկանի վրա անջնջելի հետքեր։ Երեխան յետագայում կարող է ոչինչ չը յիշել իր երեխայութիւնից, բայց նրա գլխից բոլոր անցած-դարձածն անգիտակցաբար անդրադառնում է նրա ընտանութեան, կազմուածքի, նրա սովորական հոգեկան տրամադրութեան վրա։ Առաջին տարում երեխային որքան կարելի է չը պէտք է շատ լացնել։

Մի քանի մայրեր թոյլ են տալիս երեխային ճչալ այնքան ժամանակ, մինչև որ երեխան ոյժից ընկնի, հաւատալով այն նախապաշարմունքին, որ լացը զարգացնում է թոքերը։ Այդ տեսակ մայրերի մասին կարելի է ասել՝ «չը գիտեն, թէ ի՞նչ են անում»։ Մենք, հասակաւորներս, ջարդված և յոգնած ենք զգում մեզ ամեն մի սաստիկ յուզմունքից յետոյ, օրինակ՝ սաստիկ գրգռվելուց, բարկանալուց յետոյ. որքան կործանարար ազդեցութիւն կունենայ փոքրիկ երեխայի հոգեկանի վրա նրա անընդհատ, սաստիկ լացը, այն ծայրայեղ անբաւական դրութիւնը, որի մէջ գտնվում է երեխան նման լացի ժամանակ։ Մենք գիտենք, որ երեխային յոգնեցնում է մինչև անգամ նայելը, լսելը. ամեն մի անբաւականութիւն և նրա հետ կապ ունեցող կանչը երեխայի չը կազդուրված ջղային կազմուածքի վրա ունենում է քայքայիչ ազդեցութիւն։ Կարելի է հաստատապէս ասել, որ առաջին ամիսների ընթացքում շատ լացող երեխան յետագայում անկասկած պիտի ունենայ ուժասպառ, ուստի և չափազանց անհաստատ ու դիւրագրգիռ բնաւորութիւն։ Առաջին իսկ երեխայական տարիներում մանուկի կրած զրկանքները, օրինակ, կողմի վերաբերմունքը նրա հետ, որքան և իցէ, իւրաքանչիւրը

բագործներին, բայց անկարող եղաւ գտնել նրանց։ Երկիւղ կայ, որ Օվչեանին աւազակները տարած լինեն սպանելու նպատակով, որովհետև ենթադրվում է, թէ նա ճանաչել է իր վրա յարձակվողներին, որոնք, ի դէպ է ասել, եղել են ծպտեալ ուսանողների շորերով»։

◆ Միենոյն տեղից գրում են. «Այստեղ շատ տարօրինակ թւաց, որ Սուրամի ծխ. դպրոցի 50-ամեայ ոտնի հանդիսին ներկայ չեն եղել ոչ թեմական առաջնորդը, ոչ էլ թեմական տեսուչը։ Մանաւանդ վերջինս ի պաշտօնէ պարտաւոր էր ներկայ լինել այդպիսի մի հաղուագիւտ հանդիսի, որպիսին է վրացախօս շրջանի հայ դպրոցի 50-ամեայ յոբելեանը։ Տարօրինակ է թւում մանաւանդ այն հանգամանքը, որ առաջնորդը և թեմական տեսուչը գնացել են ամարանոց Դիլիջան, մինչ Սուրամը ևս վաղ ամարանոցներից չէ...»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Օգոստոսի 1-ին, առաւ. ժ. 9-ին, Մոսկվայի նահանգի Իսմայէլի գաւառի գիւղացի հրան Պետար Թէօդորովիչ Մարկովիչը և Վիլենի նահանգի Ծարի գիւղացի Թէօդոր Պետրովիչ Բոգդանովը Բէլոնսկայա փողոցում պաշտօնթող պոլիսմէնի Իվան Վասիլիևիչ Լապատնովի պատկանող № 19 տանը երկրորդ յարկի անդուրգները շինելիս՝ տախտակամածը պոկվեց և 3½ սաժէն բարձրութիւնից վայր ընկաւ, տախտակները հետ մէրսեցաւ, ծանր ջարդուածքներ ըստանալով։ Նրանց իսկոյն փոխադրեցին Մոսքայէլեան հիւանդանոց՝ բժշկական օգնութիւն հասցնելու համար։ Հերթապահ բժշկի ասելով, Բոգդանովի ստացած ջարդուածքները ծանր են և նրա կեանքին վտանգ են սպառնում։ Մարկովիչինը այնքան ծանր չեն։ Երկուսն էլ թողնված են հիւանդանոցում բժշկելու։

◆ Նոբիյսկայա փողոցի վրա պատկանող Մաքսիմ Ստեպանովիչ Սմիրնովին պատկանող № 36 տանը, օգոստոսի 1-ին, մոտաւորապէս առաւ. ժամը 11-ին, քանդվեց տանը վերջ շրջանում գտնվող պատի մի մասը։ Թերեւ չարդուածք տացաւ տարց Երևանի նահանգի բնակիչ բանւոր Յովնան Կրիգորիևիչ Սարգիսեանը, որը աշխատում էր վրան պատի մոտ։ Վիրաւորվածին բժշկական օգնութիւն են հասցրել Արամեան հիւանդանոցում։

ԲԱՆԻՄՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԱԳՈՒՄ

◆ Օգոստոսի 1-ից հեռագրում են «Кавказъ»-ին. «Երեկ երեկոյեան, փիլմաները կառավարիչները բազմադիր ժողովի հետ խորհրդակցելուց յետոյ, քաղաքապետը մշակեց մի յայտարարութիւն, որով առաջարկում է փիլմաների կառավարիչներին նախ բանակցութիւններ չը վարել կողմնակի անձանց հետ, երկրորդ՝ չընդունել ապօրէն բնոյթ կրող պահանջները, երրորդ՝ չը վճռել գործադուլի ժամանակվայ համար։ Բանւորներին քաղաքապետը տեղեկացնում է, որ խաղաղ գործադուլին ոստիկանութիւնը միջամտութիւն չի գործիլ։ Սակայն ասված է յայտարարութեան մէջ, թէ անժամանելի է այն աշխատանքների դադարեցնելը, որոնք հոգում են քաղաքի կարիքները ու նաւթահանքերի ձեռնարկութեանց կարիքները, նամանաւանդ գործարանների պահպանութիւնը։ Այդպիսի աշխատանքների դադարեցնելը առիթ կը լինի վճռական միջոցների։ Տրամադրութիւնը խաղաղասիրական է։ Փոքր ձեր եղան վրդովեցուցիչ թռուցիկներ ցրելու։ Դանւորների կէսից աւելին պատրաստ են են վերսկսելու աշխատանքները, որովհետև փիրմաների կողմից արված զիջումները իսկապէս որ խոշոր են»։

◆ «Բեզ»-ը հաղորդում է. «Առևարի և արդիւնաբերութեան մինիստրը յուլիսի 31-ին ունեցել է զրոյց ամենախոշոր փիրմաների ներկայացուցիչների հետ։ Բացում ներկայումս ակող իրերի դրութեան մասին։ Միենոյն օրը մինիստրութեան մէջ յատուկ խորհրդակցութիւն կայացաւ գործադուլի դէմ մաքառելու համար, որին մասնակցում էին Նոբելի, Ռոշիլդի և այլ փիրմաների ներկայացուցիչներ»։

◆ «Р. Молва»-ին հաղորդում են, որ յուլիսի 31-ին նաւթարդիւնաբերողների երկրորդ խորհրդակցութիւնը վճռականապէս մերժել է բանւորների պահանջները՝ 8 ժամվայ օրական աշխատանքի և մայիսի 1-ը տօնելու մասին, և համաձայնվել է կոմպրոմիսներ անել բանւորական յանձնաժողովները ճանաչելու հարցում։

◆ Յուլիսի 29-ին տեղի է ունեցել նաւթարդիւնաբերողների խորհրդի նիստ՝ քննելու նաւթարդիւնաբերական շրջանների բանւորութեան ներկայացրած ընդհանուր պահանջները։ Ժողովը առաջադրած պահանջները բաժանելով երեք կատեգորիաների—առաջինը իրրև օրէնսդրական հատատութիւնների կամ կառավարչական իշխանութեան իրաւասութեանը վերաբերող, երկրորդը՝ բացառապէս ամեն մի առանձին ֆիրմային իր բանւորների համաձայնութեանը վերաբերող, և երրորդը՝ նաւթարդիւնաբերական համագումարի իրաւասութեանը վերաբերող—որոշել է «նաւթարդիւնաբերական բանւորութեան ընդհանուր պահանջները» թողնել առանց քննութեան։

ՄԱՄՈՒԼ

Բոստոնում հրատարակվող «Ազգ» թերթը, խօսելով համերաշխութեան մասին, որ վերջերս սկսել է առաջ գալ հայկական գանազան կուսակցութիւնների մէջ և որի շարժառիթը հայկական հարցն է, դավելով այն ջանքերը, որոնք եղան զանազան կողմերից՝ ամրացնելու այդ համերաշխութիւնը և այժմ տալու Պոլսոյ-փաշա Նուպարի նախագահութեամբ գործող ազգային պատգամաւորութեան աշխատութիւններին, ուրախութիւն է յայտնում և այն մասին, որ

Անոնք իսկ, որ Ամենայն Հայոց Հայրապետութիւնը իբրը էջմիածնայ ճանիցը կորակէին ու կը պնդէին, որ Թիւրքիոյ հայոց պատրիարքութիւնն ամեն հեղինակութիւնէ զուրկ՝ Կուսակցութիւն շրջանակին մէջ սահմանափակուած սիրացուական խուց մը կամ կղերական յարկ մըն է, ազգին գոյութեան պատուար ու պահպանակ այդ հատատութիւններու նշանակութիւնը բարձր բռնելու մասին փութկոտ նախանձախնդրութիւն մը ցոյց տալ սկսան, մինչև անդամ քիչ մը աւելի առնոնցմէ՝ զորս երբէկ այդպէս պահանջէնուն համար՝ պահպանողական ու յետադիմական կը կոչէին. ու անա ազգ. ժողովոյ իրարու այնքան ներհակ կարծուած խմբակցութիւններուն մէջն փոխադարձ հասկացողութիւն ու համագործակցութիւնը չուշացաւ, գրեթէ ինքնաբերաբար իրարզութիւն մը զարձաւ։ Ու այսօր, երբ իրենք, երկիի այդ ծայրայեղներն, այս երեւոյթն իբրը վաղուց փափաքուած յառաջիմութիւն մը կը հնչակեն, մեզի ուրիշ բան չի մնար, բայց եթէ խնդակցիլ ու գնահատել իրենց այդ քայլը։

Սակայն թերթը միւս կողմից քարոզում է թոյլ չը տալ, որ «համերաշխութիւնը կարգ մը պատեհապաշտներու ձեռքը շահագործումի առարկայ և խաղալիք չը դառնայ», որովհետև, դժբաղդաբար, ինչպէս գիտենք, եղաւ ձգտումն մի քանի կուսակցութիւնների կողմից՝ շահագործելու այդ համերաշխութիւնը յօգուտ կուսակցական շահերի։

Ուստի թերթը, ամենայն իրաւամբ զրուցէ է.

Սահմանադրական հինգ տարիներու դառն ու սուղ փորձառութենէն յետոյ, ասիկա անյետաձգելի պարտականութիւն մըն է այլեւս, զոր ոչնչ ընել կամ համերաշխութեան սիրոյն կուսակցական բախտախնդրութիւններու աչք գոցելը, պէտք է գիտնալ, որ լուն իսկ համերաշխութեան դէմ մեծագոյն դաւաճանութիւնը կըլլայ։

Յետոյ՝ համերաշխութիւնը պէտք չէ շփոթել համակերպութեան հետ։ Կարծիքի տարբերութիւններ, հակառակ հոսանքներ չարիք մը չեն երբէք ժողովուրդի մը ծոցին մէջ. եթէ գոյութիւն չունենային իսկ, պէտք էր մշակել, յառաջ բերել զանոնք։ Հետեւաբար համերաշխութիւնը չի կրնար ու պէտք չէ որ բառնայ քննադատելու իրաւունքը, պայմանաւ որ անիկա կիրարկուի ազնիւ ու շինիչ եղանակաւ մը, ու ոչ թէ գձուձ, խծծող ձեւերու մէջ ու քանդելու նպատակաւ։ Համերաշխութիւնը նաև լռութիւն չի պարտադրեր, երբ անաւեր զեղծումներ, եղբայրասպան ոճիրներ կան մէջտեղ՝ լռութեան դատերաշխութիւնը, որ ազատութիւնն ու արդարութիւնը կը խեղդէ և բռնութեան ու ոճիրին ասպարէզ կուտայ, ազգին դէմ ուղղուած կործանարար դաւադրութիւն մը միայն կրնայ ըլլալ, ու ամեն խղճմտանք պէտք է ըմբոստանայ ու ցցուի անոր դէմ։

Եթէ համերաշխութիւնը յենակէտ մը պիտի ըլլայ, իրենց փոքրոգի փառասիրութեան ու յիմար սխալներուն հետեւանքով իյնալու դատապարտուած կարգ մը անհատներ, կուսակցական պատասխանատուներու վրայ ժամանակ մըն ալ կանգուն պահելու, եթէ անիկա միջոց պիտի հայթայթէ անխիղճ շահանձիրներու ու շահագործողներու վարկին ու համբաւին մէջ բացուած պատռուածքները կարկատելու, կամ իբր նախշուն քող մը պիտի ծառայէ ոմանց ձեռքը կուսակցական ասնանին տակ ամեն կամայականութիւն շարունակելու, աղէկ ու օգտակար է, որ բնաւ չըլլայ։ Ազգին զանազան հոսանքներուն մէջ գտնուող անկեղծներու տուար զանգուածն, ուրեմն, որ իր բուն ու մաքուր իմաստով համերաշխութեան ցանկացող է, պէտք է անսիրող ու անտրոք վերաբերում մը ցոյց տայ, հանրային գործունէութեան մէջտեղրտը թունաւորող ապականութիւններու դէմ, որ հատատութեան ու կազմակերպութեան մէջ ալ գտնէ կամ հանդիպի անոնց։

Այս տեսակէտով շատ կարեւոր պահանջ մը կայ, զոր անհրաժեշտ կը նկատենք մասնանշել հոս։

Որքան ալ սկզբունքի ու ոչ սակաւ խնդիրներու մէջ տարակարծիք գտնուինք, իբրը ազգին մէջ աւելի կամ նուազ նշանակի կազմակերպուած ոյժ մը, Դաշնակցութեան կարեւորութիւնը ոչ կը ժխտենք ու ոչ կանտեսնենք, հետեւաբար կընդունինք, թէ ազգային հաշիւներուն մը մէջ անիկա պէտք է ունենայ իր տեղն ու դիրը, հոգ չէ՝ եթէ նոյնիսկ սահմանադրութենէն առաջ ու մանաւանդ վերջը սխալներու շարք մը ունեցած ըլլայ իր հետն։ Սխալիլը բնական է, ու մենք չենք կրնար մոռնալ, որ Դաշնակցութիւնը ճշմարիտ հերոսներ, կորովի մարտիկներ, հաւարակային մաքուր գործիչներ ու մղուած սիրալի պայքարներ ալ ունի իրեն հետ, բայց կէտ մը կայ, որու շուրջ անոր այսօրուան վարիչները կասկածելի լռութիւն մը կը պահեն և որ սակայն պէտք է լուսաբանուի, նոյնիսկ Դաշնակցութիւնը իր խղճին վրայ ծանրացող բեռէ մը ազատելու, ու ճակտին վրայ զարնուած արատէ մը մաքրելու համար։

Դաշնակցութիւնը, սահմանադրութենէն յետոյ, երկու անգամ համաձայնութիւն կնքեց Իթթիհատի հետ։ Մէկը՝ կիլիկեան արհաւիրքի վաղորդայնին ու միւսը՝ օսմ. վերջին ընտրութիւններու նախօրեակին։ Ազգը, հայ քաղ. կուսակցութիւններն ու Դաշնակցութեան հետեւող շարքերն իրենք իսկ՝ իրաւունք ունին պահանջելու ու գիտնալու, որ իրենց արիւնին ու իրաւունքներուն շուրջ կնքուած այդ սակարկութիւնն ինչ էր։ Դաշնակցական գործիչներ ազգին համար ինչ ստացան ու ինչ զին վճարեցին։ Ադանայի եղեռնին ու անոր պատասխանատուներուն շուրջ ողբացեալ Յ. էֆ. Պապիկեանի տեղեկագրին հրատարակութենէն յետոյ, այլևս հարկ չկայ գաղտնիք պահելու, ու անհրաժեշտ է որ հրապարակ գրուի այդ համաձայնութիւնն և յստակ ու վճռական կերպով ըսուի, որ անիկա բոլորովին խզուած է, թէ ոեւէ չափով կը պահէ իր նշանակութիւնն ու ոյժը. և յառաջիկայն երբ հրապուրիչ խոյծեր ըլլան, նոյն խաղերուն կրկնութեամբ պիտի վերանորոգուի։

Թող լուսաբանուին այս կէտերը, մանաւանդ երբ մութ բանակցութիւններու ու յարաբերութեանց շշուկն ու դաշնակցական օրգանների մէջ Իթթիհատի շէֆերը պաշտպանելու ընոյթ ունեցող տողեր ու հատուածներ ալ կուգան իրաւացի կամ ոչ կասկածներ ներշնչել մեզ։

Որպէսզի առանց խոնարհումների ոեւէ հայու կարելի ըլլայ իր ձեռքերը Դաշնակցութեան երկարել, պէտք է հասկցուի թէ երբէկ այդ ձեռքերը ինչո՞ւ եւ ի՞նչ պայմաններով կը զտնուէին մեր եղբայրներուն արիւնով ծեփուած ձեռքերու մէջ եւ թէ այսօր բոլորովին ազատ ու մաքո՞ր են այլեւս։

Այս հարցումին շիտակ ու անվերապահ պատասխանը, շատ խոշոր նշաններ կրնայ վերցնել իրական ու տեւական համերաշխութեան մը ճամբուն վրայէն։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ մայրաքաղաքի հայերի մի խումբ դիմումն է արել արտաքին գործերի մինիստր Սազոնովին և խնդրել Հայաստանում բարենորոգումներ մտցնելու տարբերողները սպասաւորելու հաւասարութիւններ են ստացել մինիստրից։

◆ Պեկինում ստացված տեղեկութիւնների համաձայն, գեներալ Զիանսիուն, իրան հրատարակելով կայսր, զօրքերով գնում է Նանսինի վրա։

◆ Սկիւտարից հեռագրում են Վիէննա, որ չերնոգորական հարաւային սահմանագլխում ալբանական մահմեդականների ցեղը յարձակվել է չերնոգորցիների վրա։

◆ «Новое Время»-ն գիմել է ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Պիշոնին և պատասխան ստացել, որ Թիւրքիային բանկերի կողմից փոխառութիւն տալու հարցում Ֆրանսիան չէր կարող արգելք լինել, որովհետև բանկերի կոնսորցիումի մէջ երկու երրորդ մասը կազմում են գերմանացիները, աւստրիացիները և ուրիշները, իսկ չը տալու համար պահանջվում էր Գերմանիայի և Աւստրիայի համաձայնութիւնը։

◆ Պետերբուրգի ֆրանսիական դեսպան Դելկասսէն այցելեց արտաքին գործերի մինիստր Սազոնովին և յայտնեց, որ կառավարութիւնը պատասխանատու չէ «Matin»-ում տպված յօդուածի համար։ Միջադէպը սպառված է։

◆ Սերբիան և Յունաստանը աշխատում են 600 միլիոն ֆրանկ փոխառութիւն անել իւրաքանչիւրը Գերմանիայում զօրքի ու նաւատորմի ուժեղացման համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

1 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Торгово-Промышл. Газ.» լրագրի տուած տեղեկութիւնների համաձայն՝ հայի բերքը անցեալ ամռան ամբողջ կայսրութեան մէջ վատթարացաւ շնորհիւ անձրևների, մանաւանդ հարաւ-արևմուտքում։ Ներկայումս աշնանացան ցորենն ու հաճարը գնահատվում են միջակից աւելի։ գարնանացան հացաբերքերից ցորենն ու վարսակը լաւ են։ Դարին միջակից բարձր է։

Մամուլի գործերի կոմիտէտը արգելք է դրել «Рабочая Правда»-ի № 17-ի, «Живая Жизнь»-ի № 19-ի և «Сѣверная Правда»-ի № 1-ի վրա։

ՋԵԼԵԱՐԻՆԱԿ։ Մի շաբաթվայ ընթացքում, սկսած յուլիսի 28—31-ը, Սիբիր են անցել 2749 հոգի, յետ են դարձել 782։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գլխաւոր շտաբի շրջաբերականում յայտարարվում է, որ յունիսի 17-ին տրված է Բարձրագոյն հաճութիւն, Ալեքսանդր II կայսրի համար Տաշկենտում արձան կանգնեցնելու նպատակով ամենուրեք հանգանակութիւն անելու համար։

ԿԻԵՎ։ Յուցանանդէսը դիտելու և շաքարային արդիւնաբերութեան հետ ծանօթանալու նպատակով այստեղ եկաւ գերմանական գիւղատնտեսական ընկերութեան 17 անդամներից բաղկացած էքսկուրսիան Բերլինի ագրոնոմիական ճեմարանի պրոֆ. Աուգաշէնի ղեկավարութեամբ։

ԶԼ ՀԱՅԱՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

1 օգոստոսի

Նալտայից—Երիտասարդներ, Մոսկվայից—Աւէրինայեր, Ախալքալաքից — Ասլանովիչներ, Բազուից—Պոպովներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։ (Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է.

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Ղզլարափ 12 ժ. 34 ր., Դանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բաքու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Փոստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Ղզլարափ 1 ժ. 6 ր. գիշ., Դանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բաքու 3 ժ. 31 ր. ցերեկ։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Ղզլարափ 8 ժ. 50 ր. եր., Դանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բաքու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արգելութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Ղզլարափ 8 ժ. 41 ր. առ., Դանձակ 1 ժ. 7 ր. ցերեկ., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բաքու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻ.—**Փոստատար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվո 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվո 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արգելութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվո 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Փոստատար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալեքսանդրապոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ալուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/25 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալեքսանդրապոլ 6 ժ. 51 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ալուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալեքսանդրապոլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄԻ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Բորժոմ 10 ժ. 41 ր. առ., Բորժոմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Բորժոմ 5 ժ. 59 ր. ցեր., Բորժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄԱՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Փոստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Փոստատար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Փոստատար գնացքը** № 4Դ./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

23 տարվայ մանկավարժական հմտութեամբ

Ուսուցչուհի

ցանկանում է ունենալ դասեր ծխական դպրոցներում ռուսերէնից, թւաբանութիւնից (ռուսերէն լեզուով), պատմութիւն և ձեռագործ։

Դիմել՝ Одесса, Княжеская, 23, кв. 8—Учительницѣ.

612. 3—1

ՀՈՆՕՐԲԵԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԵՄ ՆՈՐ-ՄԻՋՈՑ

„SALO—ՊԻՉԻԼԻՆ“

ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իրրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատուկ ընթացքը։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ծանապարհածախքը պօստային սակագնով։

Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղապէ. Ապրանքների վաճառանոցում։

(7·) (П. 22276) 6—30

„Մշակի“ խմբագրատեղը վաճառվում են

հետեւեալ միպական երկերը.

1) ԶԷՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդոյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԿԻՆԵՐ, Գի դը Մոպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՈՂ ՈՍԿԻ, վէպ. Ց. Սօլովեանի . . . . . —40 կ

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախքը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի 25%։

(5) 10—5

ՈՒՐՄԻԱՅԻ (Պարսկաստան. Ուրմիայի նահանգ) հայոց գպրոցի համար հարկաւոր են 2 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և 1 ՎԱՐԺՈՒՀԻ։ Ուսուցիչներից մինը, որ ռուսերէն լեզուի համար է, պէտք է կամ գիմնազիաւարտ և կամ ուսուցչական ինստիտուտ աւարտած լինի. երկրորդը, որ հայոց լեզուի և միւս առարկաների համար է, պէտք է թեմականաւարտ կամ ճեմարանաւարտ լինի։ Վարժուհին պէտք է աւարտած լինի կամ գիմնազիան, կամ Յունանեան և Գայիանեան դպրոցները։ Ցանկալի էր, որ ուսուցիչը և վարժուհին ամուսնացեալ կամ եղբայր և քոյր լինէին։ Ռոճիկը առաջինի համար 800 ր., երկրորդի և երրորդի համար 600-ական ր.։ Ճանապարհածախս 40 ր.։ Ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեանը՝ պ. Հ. Առաքելեանին մանրամասն պայմանները իմանալու համար։

610. 3—1

Բաշտի «Մ. Ա. Յորդանանեան» ազգային երկսեռ դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ ունենայ ցենզ և մի քանի տարվայ փորձառութիւն և որեն, ի դէպս, կարելի լինի յանձնել նաև աւ.-ուսուցչի պաշտօնը Աւանդելի առարկան՝ թւաբանութիւն է, շաբաթական 24—25 դաս, ռոճիկը 6—700 ր., իսկ աւագ-ուսուցչութեան դէպքում յաւելեալ 50 ր., ճանապարհածախս՝ 25 ռուբլի։ Ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեան՝ պ. Հ. Առաքելեանին։

611. 3—1

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆԵՐ

Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկոլայեվսկայա, 36, Վօրոնցովի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

613. 50—1

ՈՐԴԻՔ Բ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑ Առևտ. Տան

ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

(Սերգիէվսկայա փողոց № 7.)

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՋՈՒԼՖԱ-ԹԱՒՐԻԶ մեկնող

Գ. Կ. ՎԱՍԻԼԻԵՎԻ ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ՏՈՄՍԱԿՆԵՐԸ։

◆ Արագընթաց աւտոմոբիլները մեկնում են՝ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը։ ◆

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Եղբ. Բուդաղեաանների Ա/Տ. և Հաչի Հասանի

ֆայէտոնների եւ այլ կառքերի տոմսակները։

Մեկնում են ամեն օր՝

ՋՈՒԼՖԱՅԻՑ—ԹԱՒՐԻԶ

ՋՈՒԼՖԱՅԻՑ—ՇԱՐԱՖԽԱՆԱ (Ուրմիայի լճի ափերը)։

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Եղբ. Բուդաղեաանների Ա/Տ. քարկազի տոմսակները։

Մեկնում է ամեն օր՝ ՇԱՐԱՖԽԱՆԱՅԻՑ—ՈՒՐՄԻԱ (Ուրմիայի լճի ափերը) I, II և III կարգերով (III կարգը պալուբայի վրա)։

Կարելի է ստանալ տոմսակները նաև ուղղակի հաղորդակցութեան ՋՈՒԼՖԱՅԻՑ—ՈՒՐՄԻԱ I, II և III կարգերի համար։

ՏԵՂԵՐԸ ՎԱՂՕՐՕՔ ԿԱՐԵԼԻ Է ԳՐԱՒԵԼ ՀԵՌԱԳՐՈՎ։

Դրամի փոխադր. Պարսկաստանի բոլոր քաղաք.

Գրասենեակը բաց է առաւօտ. ժամը 9-ից մինչև ցեր. ժ. 2-ը և ցեր. ժ. 4½-ից մինչև երեկ. ժ. 7½-ը։

(2·) *577.* 10—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный